Հաշվետվությունը գրանցվեց գրանցամատյանում 13.01.2025թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ՆԱԻՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում՝ 13.09.2024թ-13.01.2025թ. Բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում մասնակցել եմ Քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքներին.

✓ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին ամրագրված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքներին:

✓ Պատասխանել եմ «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթի ղեկավարների կողմից ներկայացված դիմումներին:

✓ Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների եռամյա հաշվետվությունների հավաքագրման և ամփոփման գործընթացին:

✓ Բաժնի լիազորությունների շրջանակներում պատասխանել եմ այլ գերատեսչություններից եկած նախագծերի վերաբերյալ գրություններին, տրամադրել եմ նախագծերին կարծիքներ և առաջարկներ, ինչպես նաև մասնակցել եմ այլ գրությունների նախապատրաստման աշխատանքների իրականացմանը:

✓ Պատասխանել եմ Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրով նախատեսված՝ 2024թ. իրականացված ծրագրերի շրջանակներում ներկայացվող գրություններին:

ԲԿԳՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

13.01.2025 թ.